**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ՄԱԾՁՓ-05/21/2**
**փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման**

ք.Երևան 23 06 2021 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲ ընկերությունն, ի դեմս գործադիր տնօրեն Գ. Արշակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, համատեղ հիշատակմամբ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ծառայության արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված 3) երկու օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրոթյուն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկվում են նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները,

բ/ Կատարողի նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե Պատվիրատուն Պայմանագրի 3.3. կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 100 000 (մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ 16 667 (տասնվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

## 5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.7 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, 2, 3 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
ք. Երևան, կոմիտաս 54բ,
«ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ 220183330939000
ՀՎՀՀ 01508665
Գործադիր տնօրեն
Գ. Արշակյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
23 06 2021 թ. կնքված
N ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/2 պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/Հ | ԳՄԱ կոդ (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | Կատարման | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 50531140 | «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության Ամասիայի հեռուստակայանի տեխնիկական շենքի (ՀՀ Շիրակի մարզի Հովտուն համայնքի վարչական տարածք) վերակառուցման (սեյսմագինվածության բարձրացում) և վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայության ձեռքբերում | դրամ | 100 000 | 1 | ՀՀ, ք. Երևան, նորք, Գ. Հովսեփյան 95 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը |

* Պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացում և եզրակացության տրամադրում: Փորձաքննությունն իրականացվում է և փորձաքննություն իրականացնողի միջև կնքվող պայմանագրի համաձայն՝ ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխան:
Փորձաքննությունն իրականացնելու համար պատվիրատուի կողմից կներկայացվի
•Նախագծային փաստաթղթեր (ընդհանուր բացատրագիր, գլխավոր հատակագիծ, ճարտարապետաշինարարական լուծումներ, ինժեներական սարքավորումներ, ցանցեր և համակարգեր, հիմնական շինարարական նյութերի, արտադրանքների կոնստրուկցիաների հավաք ամփոփագրեր),
• Նախահաշվային փաստաթղթեր (Ամփոփ, օբյեկտային և լոկալ նախահաշիվներ):
Տեխնիկական առաջադրանք
Առաջադրանքի վերջնական նպատակն է նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:
Փորձաքննության միջոցով ճարտարապետաշինարարական փաստաթղթերով սահմանված նախագծային լուծումների ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին համապատաս-խանության ապահովում:
Փորձաքննության միջոցով աշխատանքային նախագծի ներքո մշակված
1. գծագրական մասի և մասնագրերի,
2.նախագծային և նախահաշվային փաստաթղթերով ամրագրված ծավալների միմյանց համապատասխանության ապահովում:
Փորձաքննության միջոցով նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտումներով մշակված քաղաքաշինական փաստաթղթերում նախագծային լուծումներին առնչվող շեղումների վերաբերյալ նախագծային կազմակերպության հետ համատեղ փոփոխությունների, լրացումների, այլընտրանքային լուծումների, լուծման առավել ռացիոնալ տարբերակների քննարկում՝ փորձաքննվող փաստաթղթերի պարտադիր լրամշակման պահանջով:
Պատվիրատուի տեխնիկական բնութագրով նախատեսված նախագծանա-խահաշվային փաստաթղթերի փաթեթի համար փորձաքննության ապահովում, մասնագիտական եզրակացությունների առկայությամբ պարզ փորձաքննության արդյունքներով ամփոփ եզրակացության ներկայացում:
Նախագծողի կողմից օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների ու պայմանների կոպիտ խախտման դեպքում համապատասխան առաջարկությամբ միջնորդագրի ուղղում Պատվիրատուին եզրակացության տրամադրում՝ հետևյալ բովանդակությամբ.
Փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի՝
1)նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը և դրանց համառոտ բնութագիրը.
2)ելակետային փաստաթղթերին և օբյեկտի նախագծման տեխնիկական պայմաններին նախագծային լուծումների համապատասխանության վերաբերյալ կատարված եզրահանգումները.
3)հիմնական նախագծային լուծումների վերլուծության արդյունքները, համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները.
4) ընդունված նախագծային լուծումների վերաբերյալ դիտողությունները և առաջարկությունները, նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականները, առաջարկվող ճշտումների հիմնավորումները՝ պարտադիր հղում կատարելով այն նորմին, որի խախտումն արձանագրվել է.

5)փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով կատարված հիմնական փոփոխությունները և լրացումները.
6)քաղաքաշինական փաստաթուղթը երաշխավորելու կամ այն լրամշակման վերադարձնելու կամ այն մերժելու մասին որոշման հիմնավորումները: Փորձագիտական մարմնի դիտողություններն ու առաջարկությունները կարող են ներկայացվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների ապահովման մասով:

Բացի այդ, հետևյալ ձևակերպումները
1.Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան,
2.Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին,
3.Նախագիծը երաշխավորվում է դրական եզրակացությամբ՝ ...... հազ.դրամ նախահաշվային արժեքով,
4.Փորձաքննության ներկայացված փաստաթղթերի ցանկը:

Փորձագիտական դրական եզրակացությունը չի կարող պարունակել նախագծային լուծումների վերաբերյալ դիտողություններ, առաջարկություններ կամ նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականներ:

Ամփոփիչ ձևակերպում.
1. «Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, կամ
2. «Նախագիծը վերադարձվում է լրամշակման, կամ
3 «Նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական պահանջներին
4. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | ք. Երևան, կոմիտաս 54բ, |
| h/h 1570027609970100 | «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ |
| ՀՎՀՀ 01501898 | ՀՀ 220183330939000 |
| | ՀՎՀՀ 01508665 |
| | Գործադիր տնօրեն |
| | Գ. Արքակյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 2*
*23 06 2021 թ. կնքված*
*N ՀՀՌՅ-ՄԱԾՁԲ-05/21/2 պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախ. միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդ-ամենը |
| 1 | 50531140 | «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության Ամասիայի հեռուստակայանի տեխնիկական շենքի (ՀՀ Շիրակի մարզի Հովտուն համայնքի վարչական տարածք) վերակառուցման (սեյսմազինվածության բարձրացում) և վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրաման ծառայության ձեռքբերում | | | | | | | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 | 100 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
ք. Երևան, կոմիտաս 54բ,
«ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ 220183330939000
ՀՎՀՀ 01508665
Գործադիր տնօրեն
Գ. Արշակյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*______ ______________ 2021 թ. կնքված*
*N ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/2 պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հh ______________________ | հh______________________ |
| հվհհ ____________________ | հվհհ______________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

______ ____________ *2021 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_______________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3
«23» հունիսի 2021թ. կնքված
№ ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/2 ծածկագրով գնման պայմանագրի

**Կատարող**
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
ք.Երևան,, Կոմիտաս 54բ
"ԱԿԲԱ-ԲԱՆԿ "ԲԲԸ
հ/հ 220183330939000
ՀՎՀՀ 01508665

**Պատվիրատու**
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց » ՓԲԸ
Ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 95
Ամերիաբանկ ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« 07 » հուլիսի 2021թ.
Պայմանագրի անվանումը՝ Փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման գնման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 23.06.2021թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/2
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «07 » հուլիսի 2021թ.դուրս գրված № Ա1667810419 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները:

| Մատուցված ծառայությունները | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | Անվանումը | Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Քանակական ցուցանիշը: Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի /հազ.դրամ/ | Քանակական ցուցանիշը: Փաստացի /հազ.դրամ/ | Կատարման ժամկետը: Ըստ պայմանագրով հաստատված | Կատարման ժամկետը: Փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազ.դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| 1 | "Հայաստանի հեռուստատեսային ցանց" ՓԲ ընկերության Ամասիա հեռուստակայանի տեխնիկական շենքի (ՀՀ Շիրակի մարզի Հովտուն համայնքի վարչական տարածք) վերակառուցման (սեյսմագինվածության բարձրացում) և վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայության ձեռքբերում: | "Հայաստանի հեռուստատեսային ցանց" ՓԲ ընկերության Ամասիա հեռուստակայանի տեխնիկական շենքի (ՀՀ Շիրակի մարզի Հովտուն համայնքի վարչական տարածք) վերակառուցման (սեյսմագինվածության բարձրացում) և վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայության ձեռքբերում: | 1 | 1 | 23.06.2021թ. 07.07.2021թ. | 23.06.2021թ. 07.07.2021թ. | 100,0 | 2021թ. |
| | **Ընդամենը** | x | x | x | x | x | 100,0 | x |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ – ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
---------------------------------
(ստորագրություն)
Գ.Արշակյան
(ազգանուն, անուն}
Կ.Տ

Ծառայությունը ընդունեց
---------------------------------
(ստորագրություն)
(ազգանուն, անուն}
Կ.Տ

Հավելված 3.1
«23» հունիսի 2021թ. կնքված
№ ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/2 ծածկագրով գնման պայմանագրի

**ԱԿՏ №1**

**Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց » ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2021թ «23» հունիսի կնքված № ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/2 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2021թ. հուլիսի 07 -ի հանձնման–ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| "Հայաստանի հեռուստատեսային ցանց" ՓԲ ընկերության Ամասիա հեռուստակայանի տեխնիկական շենքի (ՀՀ Շիրակի մարզի Հովտուն համայնքի վարչական տարածք) վերակառուցման (սեյսմազինվածության բարձրացում) և վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայության ձեռքբերում: | 1 | ՀՀ դրամ |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Գ.Արշակյան
(ազգանուն, անուն)

---------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

Ընդունեց

(ազգանուն, անուն)

---------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 7 | Հուլիս | 2021 թ. | | Ա | 1667810419 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | | |
| 7 | Հուլիս | 2021 թ. | | Ճշգրտվող հաշվի | |
| | | | | Սերիա | Համար |
| | | | | | |
| | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | | | | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 23 Հունիս, 2021 թ. | ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-05/21/2 |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

**Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի**

| | | |
|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 1 5 0 8 6 6 5 | |
| [9] Անվանումը | ՀՀ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) | |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 8 6 6 5 / 1 | |
| [11] Բանկային տվյալները | "ԱԿԲԱ-ԲԱՆԿ "ԲԲԸ | N 220183330939000 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Տ.Մեծի 4 | |
| [13] Լրացուցիչ տվյալներ | Գործունեության հասցեն, ք. Երևան, Կոմիտաս 54բ | |

**Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի**

| | | |
|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 0 1 8 9 8 | |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 1 8 9 8 / 1 | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) | |
| [17] Բանկային տվյալները | Ամերիաբանկ ՓԲԸ | N 1570027609970100 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ 95 | |
| [19] Լրացուցիչ տվյալներ | | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Հայաստանի հեռուստատեսային ցանց ՓԲԸ Ամասիա հեռուստակայանի տեխ.շենքի (ՀՀ Շիրակի մարզի Հովտուն համայնքի վարչական տարածք) վերակառուցման և վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի պարզ փորձաքննության և եզրակացության տրամադրման ծառայության: | դրամ | 1 | 83333.33 | | 83333.33 | 20 | 16666.67 | 100000 |
| **Ընդամենը** | | | | | | 83333.33 | X | 16666.67 | 100000 |

Դուրս գրող՝ ARSHAKYAN GRIGOR 3805660278
անունը, ազգանունը

*Ստացող՝ PETROSYAN BELA 6405650081
անունը, ազգանունը

07/07/2021 14:10:56

12/07/2021 08:51:08